* * Պօղոս Արապեան ծնած է 1742 ին, Ակնայ մօտ՝ Ապուշեխ գիւղը: Սուլթան Սելիմի օրով Պօլիս գալուն՝ հօրը հետ կը բնակի Այազմա թաղը. միջոց մը շրջուն փերեզակութեամբ կ՚ապրի, ապա կ՚աշակերտի իր տպագրիչ հօր՝ Ած-ատուրեան Յոհաննէսի քով՝ որուն ունեցած գիրերը հնացեալ ձեւի բերած ու կատարելագործած է, պակասներն ալ ամբողջացունելով: Հօրը հետ, յետոյ առանձին, հուսկ ուրեմն զաւկըներուն հետ գործակցաբար **երախտաւոր աւելի տարիներ** անընդհատ աշխատած է, հայր և մայր տառեր շինելու, ձուլելու և գիրքեր տպելու բազմազիմի գործերուն անձնատուր, մեծ սատար հանդիսանալով հայ մտաւորական խլրտումին և անոր ատրիճանական զարգացման: Բարի, պարկեշտ և գործունեայ, օժտուած մանաւանդ իմացական զօրեղ կարողութեամբ և ձեռներէց ոգիով մը, յաջողած է բերի վիճակի մէջ գտնուող գործ մը յառաջացունել և իրմէ առաջ ընդմիջաբար ուրիշներու կողմէ անդի ունեցած անյարատեւ փորձերէ վերջ՝ տեւական հիմը դնել հայ տպագրութեան ի Պօլիս, ուր, իւրաքանչիւր տպարան իրեն յատուկ ձուլարանն ունէր՝ որուն մէջ պատրաստուած կապարեայ տառերը չէին հանուեր ի վաճառ, կ՚երեւի թէ Կիւթէմպէրկեան աշխատանոցներ բազմացուցած չըլլալու դիտումով:



Գ. Յոհաննիսեանի 1802ին տպած "Նարեկ„ին Յիշատակարանը (*)

(Կարդալ իր տպարանին աշխատաւորներուն անունները)

* * Իբրեւ քաջ տպագրիչ և գրաձուլիչ՝ համբաւը հեռացեալ տարածուած ըլլալով ամէն կողմ, Արապեան 1770ական թուականին կը հրաւիրուի Վրաց վերջին Հերակլ թագաւորէն ի Թիֆլիզ՝ ուր կը ժամանէ տաժանագին ուղեւորութենէ մը վերջ. կ՚աշխատի նախ՝ ուսումնասիրելու համար վրացերէն տառերը զորս վերջ ի վերջոյ կանոնաւորելով տպարան կը հաստատէ: Իրեն վստահուած պաշտօնն այսպէս յաջողութեամբ գլուխ հանելուն ի վարձ կ՚ստանայ 8000 դահեկան որ թուական կարեւոր դրամ մըն էր այդ ժամանակին համար: Թիֆլիզէն կ՚անցնի Էջմիածին ու ներկայ կ՚ըլլայ միւռոնօրհնէի արարողութեան՝ Սիմէոն կաթողիկոսի օրով, որ չզլանար յարգանք և պատուասիրութիւն պօլսահայ այս տաղանդաւոր տպարանապետին: Հոնկէ դէպ ի Պօլիս ճամբայ ելլելուն՝ Արապեան ուխտ կ՚ընէ 7 տարի անխափան պահք բռնել Ս. Կարապետի տօնին, եթէ երբեք ողջ առողջ կարենար վերադառնալ: Ապուշեխցին Պօղոս պատկանելով հայ նահապետական այն սերունդին որ Լուսաւորչի հաւատքին կապուած՝ հոգեկան գերագոյն գոհունակութիւնը կ՚ունենայ Հայաստանեայց Եկեղեցւոյ հաւատալիքներուն ջերմեռանդօրէն փարած ու ժուժկալ մնալուն մէջ, երախտեայ այդ պահեցողութիւնը կը յարգէ՝ գինիի մէջ պաքսիմատ միայն թաթխելով և ճաշակելով:

(*) Այս գիրքին ետեւը կայ «խրթին բառից» ցանկ մը: Հետաքրքրական քանի մըն է անկէ, իբր պատահիկ՝ բառերու մեկնութեանց զարմանալի ոճէն.— **Ազդարան,** խաղար տօտող գործիք որ է բերան: **Աղօրի բմբռօխնելի,** տէյիրմէն էզմիշ ընելու որ է ծամելու ակռաներ: **Ատողական** ներկէլէ: **Բանին սերմնականութիւն,** խօսքին էօզը զայ ընելը: **Բիծք բացակիծք,** թախտապիթիլէն կամ սիվրիսինէկլէն խածուած տեղուանքը: **Ընդունայնարան ֆիրան,** նաժիլէ զանմէ: **Համաձնութեան օրէնք,** բռածը գտնելու օրէնք: **Ցոլավանդ,** տաս խուրում փէյսան ընող: **Վերջնական անուն,** ֆէսկին լէֆէ սապօնու...: